

բում՝ չը գիտեմ, միայն կարծեմ ծայրայեղութեան էք դիմում:

Հերքելու կարտ կէտեր շատ կան ձեր նա՝ մակի մէջ, միայն չարժեն:

Թոմաս Մեհերեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍԻ քաղաքային վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել որ վարչութեան մէջ ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ բաց է ստորագրութիւն յօդուած Թիֆլիսում հիմնելի որբանոցի, կայսր Ալեքսանդր II-ի անուանով:

ՇԱՄԱԽՈՒՅՑ պ. Էմանուէլ Փրբուզադեանցից ստացանք 8 բուրջ հետեւեալ նամակով. «Ես և իմ տունս ուրախութեամբ պարտաւորվել էինք հինգ ամիս շարունակ ամանական ութ բուրջ գոհել մեր թիւրքիարնակ հայ սովատանջ եղբարց: Զորս ամսվայ համար ուղարկել եմ, այժմ ուղարկում եմ մնացեալ 8 բուրջ և խնդրեմ բարեհաճել իր պատկանեալ տեղը հասցնել:»

Ստացանք ՄՕԶԳՕԿԻՑ 20 թ. 8 կ. յօդուած վանի կողմերին պատահած երկրաշարժից վնասվածներին, որ մի երկկողմում ժողովեցին իրանց մէջ հաւաքված երիտասարդ ուսանողները: Այդ փողը մեզ ուղարկեց Գ. քահանայ Տուրքիայեան:

ՄՕԶԳՕԿԻՑ մեզ հաղորդում են որ յօդուած շայտատանի երկրաշարժից վնասվածներին պ. Գ. Աւանեսեան դրամատուրգութիւն ունի շուտով մի կոնցերտ տալ: Յանկանում ենք երիտասարդին կատարեալ աջակցութիւն:

ԱՍՏԲԱՍԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ յունիսի 15-ին հայ սիրողները քաղաքային ամառային թատրոնում մի ներկայացում տուին բարեգործական նպատակով: Թատրոնը լի էր և ներկայացումը, ինչպէս հաղորդում է մեր թղթակիցը, աջող է եղել:

ԹԻՖԼԻՍԻ Տեազարատան բաժինը յունիսի 27-ից արդէն բացվել է, Գլխավորակա փողոցի վրա, Արծրունու դաշտէնում: Մուտքը շտաբի կողմից է: Թեւ չանց է կացրած այդտեղից մինչև գլխավոր հեռագրատունը, այնպէս որ հեռագիրներն ձեռնարկի այդտեղ են ընդունվում և ուղարկվում:

ԱԼԷՔՍԱՆԳՐԱՊՈԼԻՑ մեզ գրում են. «Ստացվեցաւ այստեղ մօտ օրերումս 70 օրինակ «Շրապարակախօս ձայն» գրքից: Այս գիրքը անդնահատելի է գնահատողների համար, բայց շատերը դժուարանում են հատուցանել 2 բուրջ և ունենալ մի օրինակ այս գրքից: Խորհուրդ ենք տալիս այստեղի Չէրքէղեաններին գնել մի մի հաս Շահազիզեանի գրքից և կարդալ: Գուցէ Չէրքէղեանի և նրա նամակների մէջ կը տեսնեն իրանց տիպը:»

Մեզ գրում են ԱԼԷՔՍԱՆԳՐԱՊՈԼԻՑ, «Յուլիսի 16-ին, Արղութեան օրիորդաց դպրոցում աշխարհագրութեան հարցաքննութեան ժամանակ մի վարժապետ, որի անունը ամենքը գիտեն, բայց օրին ևս արհամարհում եմ անուններու, իայտատակ կերպով վարդից տեսչի հետ հրապարակագէտ: Տեսչի պատիւը վիրավորված է, վիրավորված է գզգզ կերպով և ուսումնարանի պատիւը կը սպասենք թէ քնն անօրէնութիւն կաննէ այս մասին ուսումնարանի հոգաբարձութիւնը: Այսպէս է միշտ մեր հասարակութիւնը. մինչև որ չը փորձեն նստել նրա գլխին, նա չի իմանայ թէ քնն տեսակ խարդախ մարդկանց հետ գործ ունի:»

Մի պարոն խնդրում է մեզ տպել հետեւեալ նկատողութիւնը: «Մի քանի ամիս սորանից առաջ «Մշակի» համարներից մէկում ուրախութեամբ կարդացինք պ. Աղասի Մէլիք-Այվազեանի մի նամակ, որով պարոնը յայտարարում էր թէ բաց է անում Հաւաքարում մի ընթերցարան: Ուրախութեամբ ամեն օր սպասում էինք որ անա այսօր կամ վաղը կը բացվի ընթերցարանը, բայց դժբաղդաբար անցան ամիսներ և ընթերցարանի յիշատակը փոքր առ փոքր անյայտացաւ: Յանկալի կը լինէր, որ պարոնը օգուտ քաղէր իր ձեռք բերած իրաւունքից և

բազմաթիւ ստորագրողներէց, որոնց թիւը, ինչպէս ասում են 200-ի է հասնում, և բանար ընթերցարանը:

Մենք իմացանք որ Նէսիսեան դպրոցի տեսուչ Արչակ Նահապետեան և նրա օգնական Ամիրան Մանգինեան կանչվեցան յանկարծակի կերպով Էջմիածին: Ասում են որ յունիսի 26-ին երկուսն էլ ուղեորովեցին դէպի Էջմիածին:

Մի ծիծաղելի լուր: Այն օրից երբ երեքեակ երկնքի վրա գիտաւոր աստղը, Թիֆլիսի ժողովուրդը այլ և այլ յիմար մարգարէութիւններ սկսեց անել: Մի մարդ բաց է անում Էֆիմէրդին և գտնում է նրա մէջ այն գուշակութիւնը որ իբր թէ շուտով ջրհեղեղ կը լինի: Այդ լսելով նրա ծանօթը, որ շինութիւն ունէր, վճռում է դադարեցնել շինութիւնը ասելով. «Հասա շուտով ջրհեղեղ կը լինի, այլ ևս ինչիս է հարկաւոր շինութիւնս:»

ՄՕԶԳՕԿԻՑ մեզ գրում են. «Քաղաքիս հայ օրիորդական դպրոցում, ուր տիկին Տէր-Ղենուղեանից յետոյ ձեռագործութիւնը և կարը մասամբ ընկած էին, այժմ նորից վերականգնած են, ներկայ վարժուհու, օրիորդ Մանուսեանի անխնայ աշխատութեամբ: Մօզդիկի օրիորդական դպրոցի և նրան կից թատրոնական դահլիճի հոյակապ շինութիւնները արագ կերպով առաջ են գնում նրա ինիցիատիւ պ. Գանջուհեանի անշուք հոգացողութեամբ:»

«Кавказ» լրագրում կարդում ենք որ 27-ին յունիսի օրիորդ Աստղիկ ուղևորվել է դէպի Կ. Պոլիս, զօթի-Թիֆլիսեան երկաթուղով: Երկաթուղու կայարանում հաւաքվել են օրիորդին ճանապարհ գցելու համար նրա պաշտոններն ու բարեկամները: Վազօնը, որի մէջ նստեց օրիորդը, լցվեցաւ ծաղիկներով: Նոյն օրակին ներկայացրին օրիորդին «Մշակի» վերջին համարը որի մէջ տպված էր Թատրոնասի ստորագրութեամբ յօդուածը: Աստղիկ «Մշակի» համարը և Սունդուկեանի պատկերը ձեռքին, շրջապատված փունջերով, մեկնեցաւ Թիֆլիսից:

«Кавказский Курьер» լրագրը համակրութեամբ արտասուցեց իր վերջին համարներից միում «Մշակի» առաջնորդող յօդուածը «Կովկասեան համալսարանի» մասին:

Մեզ գրում են Ալեքսանդրապոլից որ մտադրութիւն կայ առաջիկայ սեպտեմբերին բանալ III-օրդ դասատուն Արղութեան օրիորդական դպրոցում, որ այժմ բողոքած է երեք պատրաստական և I և II դաստաներից:

Շնորհակալութեամբ ստացանք շորս հատ հայերէն գրքիկներ կրօնական բովանդակութեան, որոնցից երկուսը «Ճառ միսթարութեան» և «Աղօթք անձամ ես» տպված են Բագուի մէջ, 1871 և 1874 թւերին, իսկ երկուսը «Բարի լուր» և «Աւետիք» տպված են Թիֆլիսում 1880 և 1881 թւին, Յ. Մարտիրոսեանցի տպարանում: Այդ բոլոր գրքիկներն էլ թարգմանութիւններ են երևում: Մինը «Ճառ միսթարութեան» թարգմանել է Ա. Վարդանանց: Միւսերի թարգմանիչներն անունները անյայտ են մեզ, միայն մինի տակ, այն է «Բարի լուր» բրօշուրի տակ յիշված է որ դա թարգմանված է ուսուցիչ «Благая Весть» գրքիկից:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄԱՍԻՍ» ԼՐԱԳՐԻ 80ԳՈՒԱԾ

Հետեւեալ հատուածներն երևանէն գրուած նոր նամակէ մը քաղուած են: «Տեսնելով աշխարհիս փորձերը, թերահաւատ մարդն անգամ սկսում է ակամայից հաւատալ թէ չը կայ ոչինչ որ թողչի այդ, հազար անգամ սուրբ են Յիսուսի խօսքերը... Ինչպէս ասեցի վերը, Պետերբուրգի երկուս այս անի անձինք, ծածկվելով այսչափ տարի «ազգասէրի» վերաբերով, վերջապէս մերկացան և ի՞նչպէս—որ և իցէ մի հատ նամակից, որը տպված էր

Մասիսի մէջ, իսկ յետոյ արտասուած Մշակից: Այդ օրհասական նամակը կատարեց այն, ինչ որ չը կարողացաւ վրձնել տանեակ տարիներ ամբողջ հայ լրագրութիւնը. նա կարողացաւ սթափեցնել համայն հայ հասարակութիւնը և զարձակել նորա ուշադրութիւնը այն մարդերի վրա, որոնց ձեռքին էր ազգի սուրբը, Էջմիածնի չորս հարիւր հազար բուրջը: Էջմիածնի գլխաւոր պրօկուրօրը ստիպված գանկեցաւ բողոքել կաթուղիկոսի բերանից, բայց ո՞րչափ անյաջող. խօսելով աթուրի փողերի մասին, նա ոչինչ չասեց այդ աթուրը 1867-ից յետոյ մտած գումարի մասին, այլ խօսեց միայն տասն ու երկու տարի առաջ տեսած հաշիւների համար, մինչդեռ յայտնի է, որ այդ հաշիւները վերաբերվում են գրեթէ Մատթէոս կաթուղիկոսի ժամանակին. ուրեմն Էջմիածնի ընդհանուր պրօկուրօրը ձգտելով Մասիսի երևան հանած սոսկալի զեղծումը զոցել, Էջմիածնի գործը աւելի փչացրեց. ի՞նչ արած էր ոչինչ բան չէ անցնում աշխարհում անպատիւ... Այսպիսով Մասիսի նետած կայծից սկսեց գոյնալ մի հրդեհ, որը մարելու համար ոչինչ միջոց չէ կարողանում գտնել Էջմիածնի. այս քանի օրերս անցաւ Մօսկվայից Պետերբուրգ կաթուղիկոսի յատուկ պատուիրակ Աղափիրեան և պիսկոպոսը. հասարակաց ձայնը հաստատում է միահամուռ, որ նա ունէր իր մօտ կաթուղիկոսի սեփական նամակը, որով նա աղաչում է Պետերբուրգի երկու ազգասէրերին խղձալ իր վրա և ազատել պատասխանատուութիւնից ազգի առաջ, բայց երբ ազգասէր անունը եղել է միայն մի պատրուակ չորս հարիւր հազար բուրջ գանձը իրանց ձիրանները գցելու համար, արդեօք հարիւր կը լինի կաթուղիկոսական օրհանգիստով կամ անէծքով այդ գանձը յետ կորզել. հարկաւոր չէ առանձին հեռատեսութիւն ունենալ այս թշուառ բանակցութեան արդիւնքը գուշակելու համար...»

«Բայց մի բան, որ ամենից աւելին է դարձանալի այս տխուր պատմութեան մէջ, այդ մեր ազգային մամուլի կուրու թիւնն է. և յիշուելի, զիցօք թէ Մասիսը մատնացոյց չը լինէր այս սոսկալի ազգային զեղծման համար, միթէ՞ ոչ ոք ուրիշը չը պիտի իմանար այս և շարունակէր զովբանել նոցա, որոնք վամպիրի գեր կատարելով պիտի փառաբանվէին ամբողջ ազգից ազգասէրի պայծառ անուններով... Էլ ի՞նչ խրախոյս և ի՞նչ բառ հարկաւոր էր գործածել ի սկսած անպատեհների համար, երբ ազգի վերջի լուսնի գրաւողները պիտի հայրենա սիրութեամբ փայլէին, երբ Նալբանդեանցներ, Նազարեանցներ և Միանարեանցներ մատնութեան զոհեր լինելով իջան գերեզման, ազգի կողմից մի համակրութիւն չը գտնելով, միթէ՞ անիրաւութիւն չէ, որ այդ նահատակների մատնողները ամեն տեղ յարգվեն, ամենի առաջ պատիւ վայելեն... Ո՛չ, այսպիսի բան երկար ժամանակ չէր կարող անպատիւ մնալ և հաս կարծես Աստուծու վրէժխնդրութիւնը Մասիսի իր համար խարազան ընտրեց այդ մարդիկը պատժելու համար: Ամեն ազնիւ հայ, իմ կարծիքով, պիտի դատուր կանգնի այս գործի մէջ և ուշի ուշով հեռամուտ լինի Մասիսի յայտնած զեղծման ընթացքին, որից հետ պարտ է իր հանդիսաւոր շնորհակալիքը յայտնել այդ լրագրին, որի շնորհիւ միւս անգամ չի կրի ազգը այսչափ ծանր նիւթական և բարոյական զոհեր:

ուրեմն սպասենք Աղափիրեանցի բանակցութեան վերջաւորութեան, և տեսնենք թէ երկու «յայտնի ազգասէրեր» նոյնչափ պիտի անխնայ վարվեն ազգիս չորս հարիւր հազար բուրջը հետ, որչափ Նալբանդեանցի կեանքի հետ, թէ պիտի սարսին վերջապէս ազգի պայրջից:»

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԲՈՒՄԵԼԻԱ

Վերջին անցքերը բոլորական իշխանութեան մէջ մեծ ապաւորութիւն գործեցին Ֆիլիպոպօլի ազգաբնակչութեան վրա և վերջապէս բոլորական բողոք ազգասէրներին: Մայիսի 31-ին մի մեծ ժողով կայացաւ Բալական ուսումնարանի շինութեան մէջ: Այդ ժողովին մօտ 2,000 մարդիկ մասնակցեցին, իսկ այդ թիւը Ֆիլիպոպօլի համար չափազանց մեծ է: Ժողովի նախագահը խելացի կերպով կատարում էր իր պարտականութիւնները: Մի քանի ճառասուներ յարձակեցին իշխան Ալեքսանդրի հակասահմանադրական քաղաքականութեան վրա: Ժողովի վերջնապէս ժամանակ կարգացվեցաւ խորվատական ուսանողների ազգաբարձութիւնը բոլորական ժողովրդին, որ ընդունվեցաւ միաբան ծափահարութիւններով: Ժողովը հետեւեալ վճիռը կայացրեց. «Ֆիլիպոպօլի բնակիչները, հաւաքվելով հիւսիսային Բոլգարիայի գործերի կրիտիկական դրութիւնը քննելու համար, վճռեցին՝ բարձրաձայն դատապարտել Բոլգարիայի մէջ կատարվող հակասահմանադրական գործողութիւնները, ցոյց տալ մեր կարգիւնքին այն անդունդը, որ պատրաստում է նրանց համար բոլորական կառավարութիւնը, ցոյց տալ նրանց սրբազան պարտականութիւնը սահմանադրութիւնը պաշտպանելու համար, որ ապահովում է նրանց ազատութիւնը և միակ զրաւական է բոլորական ժողովրդի ապագայ վարդապետ և բարութեան համար:»

Ժողովին ներկայ գտնվող օտարականները և ուսները զարմացել էին բոլորացիներին զգուշութիւնից և սառնասրտութիւնից: Ասում են, որ այդպիսի ժողովներ կը կայանան Արեւելեան-Բումբելիսի այլ քաղաքներում:

Տեղական մամուլը, որ առաջ զգուշութեամբ վերաբերվեցաւ Մօսկվայի մէջ կատարված յեղափոխութեանը, այժմ սկսել է սաստիկ յարձակվել իշխանութեան մէջ կատարվող վերջին կարգադրութիւնների վրա: Մանաւանդ նա զայրացած է գիտութեան դատարանների հիմնելու և մամուլի ազատութիւնը սահմանափակելու դէմ: Մանաւանդ սաստիկ պիտարակում է իշխան Ալեքսանդրի բռնած ընթացքը «Народный Глаз» լրագրի, որ աշխատում է արտայայտել ժողովրդի կարծիքներն ու յանկուրթիւնները:

ՖԻԼԵՍՈՒ

Վերջին երկու շաբաթների ընթացքում օրից օր սպասվում էր Կիւֆօրի մահուան լուրը: Կիւֆօրը իրաւացի կերպով համարվում էր երեւելի փաստաբան և պետական գործիչ: Նա չափազանց ազնիւ և խիստ բնաւորութեան տէր մարդ էր: Կիւֆօր մի ժամանակ Թիւրքի գործակիցն էր և հակառակորդը քաղաքական ասպարէզի վրա: Վերջին տարիների ընթացքում Կիւֆօր հեռու էր կենում քաղաքական գործունէութեանից և իր վերջին օրերը անց էր կացնում գիւղում: Կիւֆօր ծնվեցաւ 1798 թուականին և մասնակցեց վերջին դարի

նշանաւոր շարժումներին և անցքերին Ֆրանսիայի մէջ: Նա վախճանվեցաւ իր կալուածքի մէջ, մինչև վերջին րոպէն պահպանելով իր մտաւորական ոյժերը: Նա համոզմամբ հանրապետական էր, բայց ընդդէմ չէր սահմանադրական և ազատամիտ միապետութեանը: Հանգուցեալը եռանդոտ կաթօլիկ էր և վախենում էր արմատական ներքից: Նա թիւրի նման «հանրապետութիւն էր ցանկանում, բայց առանց հանրապետականների»: Կիւֆոր վախճանվեցաւ մուսուլման ժամանակակիցներէր, բայց այնպիսի անուն թողեց, որ յարգված է բոլոր կուսակցութիւններէր:

Ֆրանսիական Ֆինանսների միւստարը սուփրութիւն ունի իւրաքանչիւր երկու շաբաթից յետոյ հաշիւ հրատարակել ստացված հարկերի մասին: Յունիսի առաջին կէսի համար հրատարակված հաշիւը չէր կարող չուրախացնել Ֆրանսիացիներին, որովհետև այդ ժամանակամիջոցի ընթացքում 15,000,000 Ֆրանկ աւելորդ հարկ է ստացված, քան թէ կառավարութիւնը ըստ պատում էր, այնպէս որ իւրաքանչիւր օր մի միլիոն աւելորդ հարկ է ստացված: Մինչ ի հարկէ չենք կարծում, որ այդպիսի աւելորդ կը ստացվի իւրաքանչիւր երկու շաբաթից յետոյ, նկատում է այդ առիթով «Temps» լրագիրը, բայց այնուամենայնիւ 5 1/2 ամիսների ընթացքում իւրաքանչիւր օր աւելորդ հարկ է ստացված գոնեա կէս միլիոնից աւելի: Այդ աւելորդը լինում է կէս միլիոնից մինչև մէկ միլիոն, այնպէս որ տարվայ ընթացքում կարելի է 182 միլիոն 365 միլիոն Ֆրանկ աւելորդ հարկ ստանալ: Այսպիսի գեղեցիկ հետեանքից հանրապետութիւնը կարող է կատարելապէս դո՛հ լինել:

Թէ պատգամաւորների ժողովը և թէ Ֆրանսիական մամուլը չափազանց վրդովված են Ալժիրիայի մէջ կատարվող անցքերի պատճառով: Լրագիրները նկարագրում են աւազակապետ Բու-Ամմի անգլո-թիւնները, որ իր աւազակներով գերի տարաւ անապատը հարիւրաւոր Ֆրանսիական և սպանիական ընտանիքներ, որպէս զի Ֆրանսիական կառավարութիւնը մեծ զուճար վճարէ նրանց յետգնելու համար: Ալժիրիայի բոլոր պատգամաւորները մի հարց ստորագրեցին, որ շուտով կը ներկայացնուի կառավարութեանը: Այդ հարցը չափազանց խիստ է և յարձակվում է Ալժիրիայի նահանգապետ, հանրապետութեան նախագահի եղբայր Ալբերտ Գրեվի վրա «Voltaire» և «Temps» լրագիրները ստորագրութիւն են բացել Ալժիրիայում վնասվածների օգտին: Ասում են, որ Բու-Ամմ չէ հետացել Ալժիրիայից և նոր յարձակում է պատրաստում: Բու-Ամմ 300—400 սպանիացի զերերներ է վերցրել:

Տունիսից հաղորդում են, որ նրա հարուստ մասում մեծ շարժում է նկատվում: Բու-Ամմի համարձակ յարձակումները և Ֆրանսիական զօրքերի անմեկնելի դանդաղութիւնը բարձրացրին տեղացիների պատերազմական ոգին և վնասում են Ֆրանսիայի հեղինակութեանը:

Ֆրանսիայի ներկայացուցիչը Կ. Պոլսի մէջ սուլթանից չը ստացաւ հրաժարական ընդունելութիւն: Երեւի նա Կ. Պոլսի չի վերադառնալ մինչև Բ. Կուռը չը փոխի իր բռնած ընթացքը Տունիսի վերաբերութեամբ:

սապէս ասենք 15 օրից աւելի էր որ վանի մէջ մի օրուայ խնդիր յարուցած էր, այն էր ազգային սահմանադրութեան իմ տարեդարձը տօնելու կամ չը տօնելու խնդիրը:

Թիւրքոյ կառավարութիւն մտերս լսարաններ, խօսարաններ, և թաղային հաւաքումներ արգելած և այս մասին մի խիստ հրամանագիր մը ուղղած էր տեղւոյս ազգային առաջնորդարանին, առաջնորդարանն ալ սոյն հրամանը հաղորդեց ամբողջ վանի հայ ժողովրդեան. զարմանալին սա է որ մինչդեռ մենք ամենքս թէ հայ և թէ թուրք, հաստարապէս օսմանցի պիտի նկատուինք անբութեան հազար անգամ կրկնած իրադէներու համեմատ, բայց և այնպէս այսպիսի արգելումներ միայն հայ ժողովրդի համար կը լինին:

Ինչ և է մտնանք սա կէտը-խնդիրէն չը դեղու համար. կառավարութիւնն արգելած էր ըսինք ժողովրդական գումարումներ առանց պատճառ մը ցոյց տալու: Վանի ժողովուրդը այս արգելքը լսածին հետեալ օրը Արարքի վարժարան գումարուցեալ Հայաստանի Սովետը կերտնական յանձնաժողովին և նորա մասնաժողովներուն, որք կը գանուէին դանապան քաղաքներում և ամբողջ անոնց որք նպատակեցին վատուրակների ժողովուրդը անցնալ տարիներու անուելի սովին ազատելով զայն, չնորհակալութեան և երախտադատական ցոյցեր արին: 2000-ի չափ բազմութիւն մը լեցուած էր հոն. ժողովուրդը խիստ զգածուած էր, շատերն կարտասուէին մտաբերելով սովից իրենց քաշած անուելներն, որք կեանք տուէին իրեն վերստին: Հանդէսը տեղի իրը 2 ժամ և ժողովուրդը ցրուեցաւ տանելով իր հետ անմուտց յիշատակ մը:

Հայրենասիր Սանուց ընկերութիւնն Աղբ. Սահմանադրութեան իմ տարեդարձը տօնել իր վրայ առած լինելով, 7 անձէ բաղկացեալ մի կարգադիր մասնաժողով ընտրած էր հանդիսի չեղուութեան համար պէտք եղած կարգադրութիւններ անելու: Հանդէսը կատարվեցաւ Յանկայներ եկեղեցւոյ զերեզմանատանը: Հանդիսն սոյնպէս հասցրել պիտի արուելը Հայրենասէր ընկերութեան Հայկական վարժարանին: մուտքի և ճաշկերպութի տոմսակներ պատրաստված էին. մուտքի տոմսակ ունեցող իրաւունք կունենար հանդիսավայր մտնելով հանդիսին ներկայ գտնուելու և ճաշին մասնակցելու իրաւունք կունենային:

Թէ տեղական կառավարութեան և թէ վանի առաջնորդական փոխանորդ Կ. Գարեգին Աբր. ուսմանտանցէն քանիցս ազգարարութիւններ և դան կարգադիր մասնաժողովին թէ արգելուած են ժողովրդական հաւաքումներ և ազգային հանդէսներ, բայց կարգադիր ժողով այդ ազգարարութիւններ լսելով հանդերձ որչեց տօնել օսմանտան տէրութեան հայոց ազգին շնորհած սահմանադրութեան իմ. տարեդարձը: հանդէսը, ամեն տեսակ կարգադրութիւններ եղան մինչ մայիս 24 ի առաւօտ ճիշդ այն պահուն որ ժողովուրդը քաղաքիս թաղերէն քննորդի հայկական դպրոցը համախմբուած և դրօշակներ բացած յատուկ պատրաստուած նուազածուներու և երգաց խումբի մը երգեցողութեամբ դէպի Յանկայներ կերթար, ուր էր հանդիսավայր, տեղական կառավարութիւնը զօրաց պահան, քաղաքիս ընդհանուր դատարանը Ասիմ պէյ և եղեռնադատ ատենին նախագահ Բէուֆ պէյ 100 հատ զօրքով կայծակի արագութեամբ Յանկայներ խրկած էր հոն խմբուած հայ ժողովուրդը ցրուելու և հանդէսը օտոնոյնու պարզուրդներուն ձերբակալելու համար. միշտակ պէյեր և փաշան կարգադիր մասնաժողովին քանի մ'անդամներ կանչելով կուսակալին հրամանը հաղորդեցին անոնց, ասոնք ալ պատասխանեցին թէ «մենք չենք որ կը տօնենք Սահմանադրութիւնը, այլ ժողովուրդն է, ձեր հրամանը կարող էք հաղորդել ժողովրդեան»: Հազար ու մէկ ըստառնալիքներ արին, ինդրեցին, աղաչեցին, պաղատեցին վերջապէս չընդունուեցաւ նոցա խնդրքը, և ժողովուրդը յաջողեցաւ տօնել սահմանադրութեան իմ տարեդարձը հանդէսը հակառակ տեղական կառավարութեան կամաց, Հանդէսը սկսեց ժամ 3-ին, և հայոց Միացեալ ընկերութեանց վարժարանտանցի աշակերտներէն մի քանիսը իրենց մարմնամարզի ուսուցիչ պ. կատարեալ Պիլիպպոսեանին հետ ձիավարութիւններ արին այնչափ յաջողակութեամբ, որ ներկայ եղող բոլոր ժողովուրդը յակծուս կրթեցաւ:

պ. Փիլիպպոսեան ուսում առած է Ռուսաստանում և վանի դիւցազն եղած է քանի մ'ամսէ ի վեր:

Ձիավարութիւնը տեղից 2 1/4 ժամ, որմէ յետոյ ճաշկերպութի տեղի ունեցաւ եկեղեցւոյ բակին մէջ և 200-ից աւելի մարդիկ ճաշեցին, որոնցմէ 100 անձ միայն ճաշկերպութի տոմսակ ունէին, իսկ մնացած հարիւրն ժողովուրդը ցրուելու եկող զօրքերն էին, որք ձրի հաց տեսնելով սճապարեցին առիթից օգուտ քաղել. ճաշկերպութի կարելի եղածին չափ չեղ և վաշուուէ անելու համար կարգադիր մասնաժողով ոչ մի ջանք խնայած չէր: Հաջը սկսեց ժամ 6-ին և տեղի մինչև ժամ 8, (ալաթ ուրբաթ), որից յետոյ ժողովուրդը հանդիսավայր գնաց. հանդիսականներն կանցնէին կամարի մը տակէն որ դարձարուած էր գոյնզգոյն ծաղիկներով, և կամարի երկու կողմերն նստած էին զոյգ մը աղջիկներ, որք ծաղիկներ կը սփռէին կամարին տակէն անցնող հանդիսականաց վրայ: Ատենախօսից բնին ալ նմանապէս զարդարուած էր գոյնզգոյն ծաղիկներով և պատկերներով. հանդէսը տեղից 2 ժամ, և ատենախօսեցին քաղաքիս նշանաւոր ուսումնականներէն մի քանիսը: կարգացուած ճառերն կառավարութեան խնդրանք յանձնուեցան նմա, ստուգելու համար թէ անոնց մէջ կառավարութեան զգչելիք կէտեր կային թէ ոչ:

Հանդէսը գոյնզգոյն վերջ տեղական պարեր ներկայացուցան, որ տեղից 2 ժամ, հուսկ ուրեմն ժողովուրդը հանդիսավայրէն մեկնեցաւ և գնաց ուղղակի իրիման հայրկի տան ստջե երգի երգեց, և իւր սիրելի և պաշտելի հայրկիին համար բարեմաղթութիւններ արեց, Վեցցէհներ գոռալով: Ասկից ալ ժողովուրդը մեկնեցաւ և գնաց ուսական և անգլիական հիւպատոսարանաց առջև և նոյն ցոյցերն արեց: Այս հանդիսին ներկայ էին ուսական փոխ-հիւպատոս պ. կամարական և Անդրոյ փոխ-հիւպատոս պ. էմիլիուս Ալէքսըն (պարսից զեպանն ալ թէ և հրակրուած էր, բայց եկած չէր) և ուրիշ շատ մը նշանաւոր անձինք. հանդիսականներ 8000-ից աւելի էին թէ այր և թէ կին:

Ահա այսպէս վերջացաւ այս հանդէսը, որոյ տեղի չունեալուն համար աշխատեցան թէ տեղական կառավարութիւն, թէ հայր Գարեգին Արուստանտանց և թէ ուրիշ շատ մը անխոհեմ խոհեմներ (!)

Վանի հայ ժողովուրդը չը պիտի մոռնայ երբէք 81-ի մայիս 24-ը, զի այն օր չէ թէ միայն Աղբ. սահմանադրութեան տարեդարձը տօնեց, այլ մի քաղ արեց նա իւր իրաւունքներ պաշտպանելու մեծ գործի մէջ:

Բաղեչն գրուած նամակ մը կիմանամ որ մայիս 18-ին հոն մեծ երկրաշարժ մը եղած է, անմասն որ Բաղէչն 8 ժամ հեռու գոտուող թեղուտ քանուց զիւր լողորովին հիմնայտակ եղած է, փրած տուններու մէջ 95 անձինք մեռած և 34 վիրաւորվածներ գտնուած են ցարդ. սոյն գեանաշարժի ցնցումը Բաղէչն ալ զրդած է թէ և, բայց վնաս չէ պատահած: Վանի մէջ ևս նոյն օր և հետեալ օր զգացուեցան ցնցումներ, բայց ոչինչ չը պատահեցաւ: Անգլիական զեպան պ. Ալէքսըն, քանի մ'օրէն ի վեր թեղուտ գնացած է, իրաց վիճակը քննելու համար:

**«ՄՇԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ**  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԿ, 26 յունիսի: Պաշտօնական: կովկասեան շրջանի շտաբի մէջ ծառայող Բուսուրլին նշանակված է կովկասեան առաջին դիվիզիայի շտաբի գլխավորի պաշտօնակատար: Սկզբովէն նշանակված է փոխ-գլխավոր անտեսական բաժնի ներքին գործերի միւստարութեան: Վսեյով նշանակված է միւստարի կանցիլարիայի կառավարիչ: «Голос» հաղորդում է որ Բուսուրլի - Վաղիկովկասեան երկաթուղու խորտակման ժամանակ, կտեպնայ կայարանի վրա, վեց վագօններ կատարելապէս փշրվեցան, ինն մարդ սպանվեցան, տասն և չորս ծանր վիրաւորվեցան և բազմաթիւ ճանապարհորդները թիթեկ կերպով վիրաւորվեցան:

ԿՐՈՆՇԱՍԻ, 25 յունիսի: Հաշի ժամանակ որ արվեցաւ կրօնշտաբի նաւատորմի ներկայացուցիչներէր ի պատիւ անգլիական նաւատորմի, որի առաջնորդն է պրինց Էդինբուրգեան, ներկայ էին Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչ, կազակովիչ, Պեշուրով

և Բուսուրլի իր եղբոր հետ շատեր շարտասանվեցան, եթէ սօստ առաջարկվեցան ուսուցիչ և անգլիերեն լեզուով վիճարկութեան և ռուսաց նաւատորմի ծաղկման, Էդինբուրգեան հերցօգի-և հերցօգուհու և Ալէքսէյ Ալէքսանդրովիչի կենացը: ճաշկերպութի մէջ կային 149 հոգի:

ԱԼԷՔՍԱՆԻՐԻՍ, 25 յունիսի: Ապստամբված արաբների պետը Բու-Ամեհօ, զիմեց Մօրօկիօի սուլթանին, հրաւիրելով նրան Աֆրիկայի շարժման առաջնորդութիւնը յանձն առնել, որովհետև նա յայտնված է հիւսիսային Աֆրիկայի խալիֆ:

ՓԱՐԻՉ, 25 յունիսի: Ալժիրիայի նահանգապետ Ալբերտ Գրեվի տեղ կը նշանակվի Լէօն Բիսօ:

ԲԵՐԼԻՆ, 25 յունիսի: Գերմանական զեպան Կ. Պոլսի մէջ կը նշանակվի կոմս Հաց-Ֆելդի տեղ, Փօն-Բագովից:

ԲՈՒԿԻԱ, 25 յունիսի: Սկուտարիից հաղորդում են որ թիւրքաց կառավարութիւնը պահանջում է տեղական ժողովրդից երկու տարուայ համար հարկերի կանխիկ վճարելը, մինչև որ սպառնակութիւնը կը սկսի մասնակցել պետական պարտքերի մէջ:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԿ, 28 յունիսի: Պաշտօնական հաղորդում են. Ներքին գործերի միւստարը որչեց արգելել «Московскій Телеграфъ» լրագրի հատուկ ծախվելը: «Голосъ» լրագրին հաղորդում են կրօնշտաղից յունիսի 27-ին հիւսուցաւ անգլիական պահապան նաւատորմը: Նրան այցելեցին թագաւորը, թագուհին և կոյսերական տան Անգամները:

ՍՒՍՏՈՎՈ, 26 յունիսի: Երէկ հասաւ այստեղ զենիտայ Էրնօտ: Էրնօց կը հասնին Աւստրիայի և Գերմանիայի զիպոմատիական գործակատարները: Տիրնօփօր մէջ ընտրված և այստեղ հասած Յանկօփ, Սյափէյիօփ և կարալիօփ պատգամաւորները մտադիր չեն մասնակցել ազգային ժողովի նիստերին: Ընտրված բոլոր պատգամաւորները 328 մարդ են, բացի չորսից զրանք բոլորն էլ պատկանում են պահպանողական կուսակցութեանը: Այսօր հասաւ այստեղ բոլորական էզզարիսօր:

Կ. ՊՈԼԻՍ, 27 յունիսի: Ե՛է յիւսուլիսամ յայտնեց, որ Եարիաթի հիման վրա խալիֆի սպանողները պէտք է միայն սրով մահուան պատժի ենթարկվին:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԿ, 27 յունիսի: Պաշտօնական հաղորդում են. Տոկային ուսումնարանական հիմնարկութիւնների մասնաժողովի նախագահ Ջելէօնօջ հիւսուցիչների պատճառով արձակված է իր պաշտօնից, մնալով Տոկային գլխավոր դատարանի անգամ: Տարգրական գործերի վարչութեան խորհուրդի անգամ Վէսիօլոյ նշանակված է կոյսերական բաժնիների գլխավոր և Տոկային ուսումնարանների մասնաժողովի նախագահ: «Голосъ» լրագիրը հաղորդում է. թագաւորը և թագուհին ընդունեցին Պորտուգալիայի արտաքոյ կարգի դեսպան և լիազօր միւստարին, որ նրանց համար և թագաժառանգի համար բերել է պորտուգալական շքանշաններ:

ԼՕՆԴՈՆ, 26 յունիսի: Կ. Պոլսից ստացված անգլիկութիւնների համեմատ զլխաւոր դատարանը հաստատեց առաջին դատարանի վճիռը Միսհագ-փաշայի և միւսների գործի վերաբերութեամբ:

ՏՈՒՆԻՍ, 26 յունիսի: Ներքին նահանգների մէջ ապստամբութիւններ են սկսված: Զօրքեր են ուղարկված ապստամբների դէմ, որոնք թիւր հետգհետէ պահասում է, որովհետև նրանցից շատերը անցնում են թշնամու կողմը:

Կ. ՊՈԼԻՍ, 26 յունիսի: Բ. Կուռը վրձնել է զարձեալ չորս բատալիօն ուղարկել Պրիզրենդ և Պեկա, որովհետև ալբանական միութեան զօրքերը սպառնող զիրք են բռնել:

ՀՌՕՄ, 26 յունիսի: Աւստրիայի ցանկութեան համեմատ իտալական կառավարութիւնը վճեց վերադարձնել Նէապոլի նախկին թագաւորին նրա հանդուցեալ մօր կայքերը, որոնք նրանից խլված էին: